

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 15 ՅՈՒԼԻՍ, 1930

ԹԻԻ 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊՕՊՈՍ ՆՈՒՊԱՐ

ՊԱՏԳԱՄՆԵՐ

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՊԷՆՏԷԿՈՍՏԷՆ ԲՐԻՍՏՈՆԵՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՑՈՅՑՆ Է

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՏՐ. ՈՒ. Ն. ԶԷՅՄՊԸՐՍ

ՎԵՐ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԸՆԿԵՐՆԵՐԴ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

ՎԵՐ. Ե. ԿԵՕՔԿԷՉԶԵԱՆ

ԵՐԱՆԻՆԵՐ

ԹՐԳ. ՅՈՎՀ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԼԷՃ» ՀԱԼԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքացիական Չարս Տիֆլիսի
գրող ամենեկին

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՒՆ

Իսկ կինը գաւաթը առնելով՝ «Ո՛հ,»
ըսաւ. «Ինչպէ՞ս կը փափաքիս անոր կե-
նացը ըսելու, անոր՝ որ այնքան քաւ-
սիրտ, այնքան անզգայ, այնքան ան-
զուժ մէկն է, սիրելի Բոպէրթ, չէ՞ որ
դուն ալ գիտես անանկ ըլլալը»

«Սիրելիս», պատասխանեց Պօպ,
«մոռցիր, մոռցիր անախորժ զգացում-
ներդ, չէ՞ որ այսօր Ծնունդ է»

«Ուրեմն», ըսաւ տիկինը, «կը խմեմ
իր կենացը՝ քու սիրոյդ համար, և Ծը-
նունդի սիրոյն համար, ոչ թէ իր։ Թող
երկար ապրի ինքը, թերեւս օր մը Ծնոր-
հաւոր Ծնունդ մը կամ երջանիկ նոր
տարի մը տեսնէ։»

Տիկին Բրէշիթէն հաբը փոքրիկներն
ևս առին իրենց բաժակները, անոնք ևս
սրտանց չխմեցին Սքուրճի կենացը. ըս-
քուճի անունը կարծես թէ ազատացուց
իրենց ընտանեկան քաղցրութիւնը։ Ու
այս սրտաբեկ վիճակը տեւեց քանի մը
րոպէ։

Անկէ հաբը սկսան իրենց առաջուան
ուրախութիւններուն. հայրիկը ըսաւ թէ
այդ օրերը հաւանականաբար զործ մը պի-
տի կրնար գտնել Պետրոսի համար, անանկ
զործ մը որ եթէ յաջողէր, շաբաթական
հինգ դահեկան եկամուտ մը պիտի բերէր։
Երկու փոքր մանուկները բարձրաձայն
քահքահ մը փրցուցին Պետրոսին վաճա-
ռական մը ըլլալու գաղափարին վրայ։
Իսկ Պետրոս խիստ լուրջ կերպարանքով
մը իր օձիքներուն մէջտեղէն կրակարանը
դիտել սկսաւ, իբր թէ արդէն տիրացած
ըլլար այդ անսահման եկամուտին։

Մարթա, որ զլխարկ շինող տիկինի

մը քով աչակերտ էր, այն ատեն սկսաւ
պատմել թէ ինք ինչ տեսակ գործեր
կ'ընէր հոն, եւ օրական քանի ժամ
գործ կ'ունենար, եւ ուրախութեամբ կը
յայտնէր թէ հետեւեալ օրը իրեն վա-
զանց տրուած ըլլալուն համար միտքը
զրած էր առաւօտուն ուղածին չափ ան-
կողնոյն մէջ պառկիլ, քնանալ, եւ ա-
ղէկ մը հանգստանալ։

Դարձեալ կը պատմէր թէ ինչպէս օր
մը հոն կոմսուհի մը և Լօրտ մը տեսեր էր,
թէ Լօրտին հասակը գրեթէ Պետրոսին
հասակին չափ կար։ Ասոր վրայ Պետ-
րոս խիստ ուղիղ դիրք մը առաւ, և իր օ-
ձիքը այնքան վեր քաշեց որ, եթէ դուն
ըլլայիր այլեւս անոր զուտ չափի կըր-
նայիր տեսնել։

Այս ամէնը պատահած ատեն չափա-
նակներն ու ըմպելիքի բաժակները ձեռ-
քէ ձեռք շրջան կ'ընէին։ Ի վերջոյ երգ
մըն ալ երգուեցաւ փոքրիկ Թիմիկողմա-
նէ, երգին նիւթը ձիւնին մէջ ճամբոր-
դած ատենը կորսուած տղու մը վրայով
էր։ Թիմ տխուր ձայն մը ունէր, և շատ
լաւ երգեց։

Այս խեղճուկ ընտանիքին մէջ ոչինչ
կար նախանձելի, ոչինչ կար գեղեցիկ.
լաւ հագուած չէին. հին ու մին հա-
գուտ, պատռտած կօշիկներ։ Ամէն
բան բացորոշ կերպով ցոյց կուտար չը-
քաւոր ընտանիքի մը կատարեալ խեղ-
ճութիւնը։ Սակայն եւ այնպէս անոնք
երջանիկ էին, երախտագէտ սիրտ ու-
նէին, զիրար շատ կը սիրէին, և Ծը-
նունդի այդ օրուան խրախճանքէն կա-
տարեւապէս զոհոնակութիւն զգացած
էին։

Ոգին իր ձեռքի ջահը թոթուեց, քա-
նի մը օրհնեալ կաթիլներ թափթփե-
ցան, ու խեղճ ընտանիքին բոլոր ան-
դամները ալ աւելի երջանիկ կ'երեւէին,
մանաւանդ փոքրիկ Թիմը, որուն վրայէն
Սքուրճ իր նայուածքը երբեք չկրցաւ
վերցնել մինչեւ վերջը։ (Շար.) 21

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔԻ, 15 ՅՈՒՆԻՍ, 1930

ԹԻԻ 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Հայ կեանքին վերջին 15 տարիներու ողբերգական պատմութեան մէջ ամենադառն իրականութիւնն է՝ հայ դեկավար տարրին ազնուագոյն խոշոր մէկ մասին կորուստը: Ահա անոնց պակասը տակաւին չլրացած արագօրէն իրարու կը յաջորդեն մեր մեծ դէմքերուն անդարձ մեկնումի գոյժերը, շանթահարիչ տպաւորութիւն մը ձգելով բովանդակ հայութեան վրայ: Այս չարագուշակ լուրերէն վերջինը, որուն արձագանգը հզան թերթերը, կուգայ Փարիզէն՝ գուժելով ժամանակակից մեծագոյն Հայ բարերարին, Պօղոս Փաշայի մահը: Ո՞վ էր Պօղոս Փաշա Նուպար:

Պօղոս Նուպար մինչեւ 90 տարեկան թուականները Հայութեան անձանօթ և գրեթէ օտար մնացած էր: Իր կրթութիւնը Զուլիցերիոյ և մանաւանդ Ֆրանսայի մէջ ստացած էր, Հայերէնի անդիտակ՝ Ֆրանսերէնը կը գործածէր իբր ընտանեկան լեզու: Իր ստացած գիտական ուսումին (երկրաչափ ճարտարագէտի վկայականը ստացած էր) և հնարամիտ նախաձեռնող ոգիին շնորհիւ շինարար մեծ ազգակ մը հղաւ Եգիպտոսի մէջ, երկրագործութեան, երկաթուղիներու և թրամվայի շինութեան մէջ, ջրաբաշխական ընկերութեան, որիչ զբաղատիրական հաստատութիւններու ստեղծումովը կամանոնց մասնակցութեամբը:

1890 ը, սակայն, կը կազմէ տնոր կեանքին դարձակէտը, երբ կ'սկսի Հայ կեանքով հետաքրքրուիլ և կը նուիրուի Հայ տառապանքը ամօքելու: Այս թուականէն կ'սկսի իր բարերարութեանց երկարատեւ շարքը: Ահաւասիկ անոնցմէ կարեւորներէն ոմանք. — 1. Գահիրէի Գալուստեան Վարժարանի վերաշինութիւնը. 2. Հելիոպոլիսի Նուպարեան Վարժարանի շինութիւնը. 3. Հայ Ուսանողական Հիմնարկութիւնը Պրուսիոյ մէջ. 4. Երեւանի մէջ Մարի Նուպար ակնաբուժարանը. 5. Մատերագարանի մը կազմութիւնը Փարիզի մէջ. 9. Հայ Ուսանողական Տունը Փարիզի մէջ, և այլն, և այլն: Ասոնցմէ իւրաքանչիւրը կը բաւէր ունէ անհատին անունը յաւերժացնելու իբրեւ բարերար:

Պօղոս Փաշա Նուպար 1913էն մինչեւ Սէվրի դաշնագրին կնքումը ինքզինքը նուիրեց Հայկական դատին, աշխատելով ապահովել Հայուն քաղաքական ազատագրումը, որուն ձախողանքը սակայն շատ յուսահատեցուց այդ կորովի սիրտը:

Պօղոս Նուպարի ձեռակերտ մեծագոյն կոթողն է Հայ Բարեգործական Ընդ. Միութիւնը, որ 1906ին հաստատուեցաւ իր եւ մի քանի համախոհներուն ջանքերովը: Այս հաստատութիւնը՝ ներկայիս միակ համազգային կազմակերպութիւնն է որ արժանի է անխտիր բոլոր Հայութեան անվերապահ գուրգուրանքին, յարգանքին եւ ամէն աջակցութեան, նկատի առնելով անոր հոյակապ անցեալը եւ ներկայ շինարար իմաստուն ընթացքը: Այս մեծ Հայուն

երկրորդ մեծագոյն կոթողը պիտի ըլլայ Նուպարաշէն քաղաքին շինութիւնը Հայաստանի մէջ: Եւ ուրախ ենք որ Մեծ Հայուն այս մեծ երազն ալ իրականութեան պիտի փոխուի շնորհիւ իր լայն աջակցութեան, իմաստուն կարգադրութեան եւ համազգային հանգանակութեան: Ահա այս հոյակապ գէմքին մեծ գործերուն մէկ պարզ եւ կարճ թուումը միայն, որոնք այնքան պերճախօս կերպով կը յայտնեն անոր արժէքին մեծութիւնը:

Այս գիտնական միտքով, ազնիւ հոգիով միլիոնատէր Հայը իր մտաւորական, հոգեկան եւ նիւթական հարստութիւնը ի սպաս դրաւ Հայ կեանքը բարձրացնելու, փրկելու համար: Այս մեծ Հայը, որուն կեանքը եղած է լուսափայլ գիծ մը միլիթարութեան, միշտ պիտի յիշուի գուրգուրալիւր յարգանքով զեղուն զգացումներով բոլոր ազնիւ հոգիներու կողմանէ:

Փա՛ռք անոր անմոռաց յիշատակին:

ՊԱՏԳԱՄՆԵՐ

(Վեր. Մ. Կ. Փափազեանի *խորոզներէն*)

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ

Վեր. Մ. Փափազեան վերոգրեալ քարոզին համար իբր բնարան ընտրած էր Մարկ. 14. 52, ուր կը նկարագրուի գիշեր ատեն երիտասարդի մը փախուստը Գեթսեմանիի մէջ, Յիսուսի ձերբակալման միջոցին: Յայտնելէ ետքը թէ Աւետարաններու հեղինակները իրենց անունները երբեք չգրին իրենց երկերուն սկիզբը կամ վերջը, միակ նպատակ ունենալով ցուցնել իրենց Փրկիչը, և թէ այս հատուածը որ միայն Մարկոսի Աւետարանին մէջ կը գտնուի, ինքնին անջատ մաս մը կը կազմէ և անկապակից կը գտնուի իր նախորդ եւ յաջորդ հատուածներուն հետ՝ այսպէս շարունակեց. «Այս անանուն երիտասարդը գրեթէ վստահ կերպով կրնանք ըսել թէ իր մասին այս աննպատ միջադէպը պարունակող Աւետարանին հեղինակն է, որ Մարկոս ըլլալ կը յայտնուի՝ Նոր կրտահարանի այս մասին եղած ուրիշ ծանօթութեանց լոյսին տակ: Ինչո՞ւ հեղինակը ինքզինքը անանուն կը ցուցնէ եւ երբ իր մասին խօսիլ կ'սկսի իրեն բուրոգին աննպատ լրան մը կը սխալմէ:»

Վեր. Փափազեան ապա սկսաւ պեր-

ճախօս եւ ազգու ռճով մը ցուցնել թէ ներկայ քաղաքակիրթ կեանքը վարակուած է ցուցամոլութեան, աժան բայց շուցուցիչ երեւոյթով հերոսութեան աստով մը: Կեանքի ամէն մէկ մարզին մէջ, առեւտուրի, զրահագիտութեան, գիտութեան եւ կրթութեան մէջ կը տիրէ ռեֆրանի ոգին: «Բայց շատ ցաւալի է», ըսաւ ան, «որ այս ոգին մտած է նաեւ բարեսիրական եւ կրօնական շրջանակներու մէջ ալ:» Եւ ապա ցուցուց թէ ինչպէս քրիստոնէական բնիկը կը դիմեն այս աշխարհիկ միջոցին հոծ ունկնդրութիւն ունենալու, թէ ինչպէս շատ մը կրօնական պաշտօնեաները ներշնչուած են այս չարագուշտի ոգիէն եւ յուզարկաւորութեանց պահուն գամբանականները պարզապէս աժան ներքոյի ձեւը կ'ստանան, յիշելով որ նոյնիսկ դժբախտական վարձատրութեամբ կարող քարոզիչներ կը հրաւիրուին զովեւոր հիւսելու հանգուցեալին վրայ: Եւ ապա շեշտեց թէ աշխարհը եւ մասնաւորապէս՝ եկեղեցին պէտք է ազատուին այս հակաքրիստոնէական ոգիէն եւ ունենան այն հոգին որ կը յայտնուի Աւետարանիչին մէջ, եւ որ համակ ինքնամոռացում է եւ նուիրում՝ Յիսուսի, զո՞ր միայն կ'ուզէ հռչակել իբր իր հերոսը:

15 Յունիս, Հայկ

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ՝ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ
ԿԵՆԴԱՆԻ ԱՊԱՑՈՅՑՆ Է (2)

Այսօր եկեղեցի մը կայ, որ ծնած է 1900 տարի առաջ: Անոր հիմնադիրները, հիմնադարերը, շօշափելի, ստուգուած դէպքերու իբր ականատես վկաները միացած են և եղած են ընկերակցութիւն մը, կազմակերպութիւն մը, մարմին մը որ Յիսուս Քրիստոսի վրայ կը կենայ. եկեղեցին՝ Անոր մարմինը, ու ինքը՝ Քրիստոս՝ այս մարմինին գլուխն է:

Բոլոր դարերու քրիստոնեաներուն վկայութիւնը միեւնոյնն է. իրենք կենդանի, շօշափելի, ստուգուած՝ իրականութեան վկաներն են, ոչ թէ երեւակայուած, հինցած պատմական դէպքերու հեռուէն հաւատացողները:

Ինձր եկեղեցին՝ գոյ և սպրոդ մարմին մըն է այսօր: Անկա ոչ թէ կազմակերպութիւն (organization) այլ գործարանաւոր մարմին (organism) մըն է: Երբեմն անոր մասերը — անդամները — կը մաշին, կը հիւանդանան. այս կ'ընդունինք. սակայն ինքն իր մէջ յաւիտենական ապրող կեանք ունի, կենսականութիւն ունի: Յաւիտենական կեանքը իր մէջն է:

1900 տարի առաջ Յիսուս անունով անձ մը ապրեցաւ՝ որ զԱստուած իր հայրը կոչեց: Այս անձին ծնունդը, ապրիլը, մահը, յարութիւնը, համարձուած եղական, անսովոր, գերբնական բաներ էին: Քրիստոսի մօտ եղողներ յարեցան Անոր, նուիրուեցան Անոր, վկաներ եղան Անոր, ապրեցան ու մեռան Անոր համար:

Քրիստոսի, հիսմնադիր և գրախ եկեղեցւոյ, վերջին խօսքերն էին. «ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի և երկրի մէջ: Ուրեմն գացէք ու բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ... Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը:» «Ա-

հա ես իմ Հօրս խոստումները ձեր վրայ կը զրկեմ. բայց դուք Երուսաղէմի մէջ նստեցէք, մինչեւ վերէն գորութիւն առնէք ձեր վրայ:»

Կ'ապսպրէր անոնց որ Երուսաղէմէ չհեռանան, հապա սպասեն Հօրն խոստումներն զոր ինձմէ լսեցիք կ'ըսէր: Վասնզի իրաւ Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատօրեր չ'անցած Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք:... Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը գորութիւն պիտի առնէք, ու ինծի համար վրկաներ պիտի ըլլաք... Մինչեւ երկրի ծայրերը: Մատթ. 19.28: ՂԿ. 24.49: Գործ. 1. 4-8:

Եթէ այս խոստումը չկատարուէր Անոր բոլոր խօսքերը անիմաստ ու ինքը անարժէք խաբերայ մը կ'ըլլար:

Եթէ Սուրբ Հոգիով չմկրտուէին անգոր ու հին վախկոտ աշակերտներ պիտի մնային ու իրենք՝ խաբուածներ: Սուրբ Հոգւոյն գալը պիտի վաւերացընէր նախորդ խօսքերը: Հաւատացին, ըստպատեցին և ստին Սուրբ Հոգին: Դուք կը հաւատա՞ք Պենտէկոստի: Եթէ կրնա՞ս չըհաւատալ՝ մի հաւատար: Ահա տեսանելի, ստուգուած, անուրանալի աշխարհածանօթ դէպք մը:

ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԵԿԱԻ, ամէնն ալ այլափոխուեցան, բարեփոխուեցան, կրակի լեզուներով օտար լեզուներ խօսող քաջ հռետորներ եղան: Հրէից իշխան ուսեալ Նիկողիմոսին այս մեծ ծշմարտութիւնը յայտնած էր Յիսուս ըսելով. «Եթէ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չ'ծնանի, չի կրնար Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել: Մարմինէն ծնածը մարմին է ու Հոգիէն ծնածը հոգի է:» Ահա՛ Հոգին Սուրբ եկաւ անոնց վրայ, Սուրբ Հոգիով ծնան, Նոր աշխարհներ եղան: Կը հաւատա՞նք: Յով. 3. 1-12:

Նիկողիմոս Հրէից մեծ վարդապետը չկրցաւ հասկնալ այս մեծ դէպքը. «Այդ ինչպէ՞ս կրնայ ըլլալ» ըսաւ և ապշած

մնաց: Այդ փորձառութիւնը չունեցողները չեն կրնար հասկնալ, բնական կերպով ապշած կը մնան ամէն դարու մէջ, մինչև այսօր:

ՕՏԱՐԱԶԳԻՆԵՐՈՒՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեութիւնը զբքի կրօնք է, այլ իրականութեան, կեանքի. ինքն իր ջանքով ապագան է: Եկեղեցին ինքը, Քրիստոնեաներուն կեանքը, զիրքեր են, յայտնութիւններ են Սուրբ Հոգիով գրւած:

Երբ այդ ձայնը եկաւ (Պէնտէկոստէն) Երուսաղէմի բազմութիւնը վազեց եկաւ այդ վերնատան բոլորտիքը... խռովեցան, վասն զի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: Պարթեաներ և Մարեր ու Եղամացիներ, եւ անոնք որ կը բնակին Միջագետքի մէջ, եւ Հրէաստանի եւ Կապադովկիոյ մէջ, Պոնտոսի ու Ասիոյ մէջ, Փոնտիոյ եւ Պամփիլիոյ մէջ, Եգիպտոսի մէջ եւ Կիւրենէի մօտ Լիբէացւոց կողմերուն մէջ, նաեւ Հռովմէացի պանդուխտներ, Կրէտացիներ եւ Արարացիներ, կը լսէին անոնցմէ որ մեր լեզուներով կը խօսին Աստուծոյ մեծամեծ բաները:

Ահա բազում ազգէ, երկրէ ու լեզուէ վկաներ (Գործ. 2. 6-13): Այն օրը հինգ հազար հաւատացին, եկեղեցիին միացան: Եկեղեցին Պէնտէկոստէի Մընունդն է, գոյ է, կ'աճի մինչև հիմա յարատեւ, դարերու մշտատեւ անժխտելի փայտն է այս:

ՀԱՅԱՍՏԱՆԷ ԱՆԿԱՅԻՆ ՀՈՆ ՊԷՆՏԷ-ԿՈՍՏԷԻ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐ

Հայաստան Առաքելական քարոզութենէ առաջ լոյս տեսած էր Երուսաղէմի մէջ, ինչպէ՞ս. — Պեկեղեցիի ալանատես վկայ 17-20ի մօտ վերոյիշեալ (Գործ. Բ. 9-11) ազգերու եւ օտարալեզու երկրացիներու մէջ անպատճառ Հայաստանէ ալ մարդիկ ըլլալու են: Քանզի Հայաստան այդ յիշուած ազգերուն շըր-

ջանակին մէջն է: Ա. Գործք Առաքելոցի հեղինակը Ղուկաս, որ ուսեալ բնութիւն մ'էր Փոքր Ասիոյ արեւելքէն, Պարթեաց, Մարաց եւ Եղամացւոց երկիրներէն կ'սկսի, կարգաւ կուգայ Միջագետք եւ անկէ վերջը Կապադովկիա անցնելէ առաջ ճամբուն վրայ պէտք էր որ Հայաստանը յիշէր: Պատճառ չկայ Հայաստանը մոռնալով կարգէն դուրս հեռաւոր Հրէաստանը գրելու: Բ. Միջագետք ու Կապադովկիա ու Պոնտոսի մէջտեղը աշխարհագրական շարքով ու գիրքով պէտք էր որ Հայաստան մտնէր ու ոչ թէ Հրէաստան: Գ. Պէնտէկոստէի այս դէպքը Երուսաղէմի այսինքն Հրէաստանի մէջ պատահեցաւ, այդ երկրին ու դրացի ժողովուրդներուն համար, Եբրայիցիներն խօսիլ օտար լեզու խօսիլ ըսել չէր ու սքանչանալիք բան մը չկար: Շատ բնական ու տրամաբանական է որ Գործ. 2. 9ի մէջ յիշուած Հրէաստանը Հայաստան կարգանք:

Պէնտէկոստէի 1900երորդ տարեգարծին առթիւ մենք Հայերս աւելի իրաւունք ունինք ուրախ ըլլալու ու պարծենալու: Թէեւ անունով առաքելական, սակայն լուսաւորութեամբ աւելի առաջ՝ Պէնտէկոստէի աստենէն ըսկըսեալ ալանատես վկաներ ու հաւատացեալ քրիստոնեաներ կային մեր մէջ:

Քրիստոնէութիւնը սկսաւ ի Հայս Պէնտէկոստէի աստենէն:

Պեկեղեցիի գաւազնէ՛ր — ՀԱՅԵՐ—պարտինք արժեցնել այդ արդարացի պարծանքը հոս, այլ քոյր եկեղեցիներէ աւելի փառաւորելով այս *soñkro* *soñr*, մանաւանդ վերստին հոգեգաղութի օրհնութիւնը ունենալով որուն շատ կարօտ ենք:

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՏՐ. ՈՒԻԼԵՐՄ Ն. ՁԵՅՄՊԸՐՍ

Շար. և վերջ

3. ԿԻԼԻԿԵԱՆ ՇՐՋԱՆ

Ատանայի մէջ 1899ին կ'սկսի գործունէութիւնը, որուն պատմութեան սկսելէ առաջ կ'ուզեմ պարագայ մը յիշել: Տիկ. Ձէյմպըրս անգամ մը ինծի սապէս ըսաւ. «Մեր ամուսնական բոլոր շրջանին միջոցին անգամ մ'իսկ պատահած էէ որ Տր. Ձէյմպըրս ինձմէ առաջ ուէ գռնէն մտած ըլլայ. անիկա միշտ քաշուած և առաջնութիւնը ինծի տուած է»: Այս փափկանկատ հոգիին տէրը կարծեմ հիմա ալ կը փափաքի որ իր մասին գիտցածս խօսելէ առաջ Տիկ. Ձէյմպըրսի մասին վկայեմ:

Տիկ. Ձէյմպըրս ծնած է Պէյրութ 1850, Դեկ. 3ին, իր մօրը մահով որբացած 1854, Յուլիս 1ին, Կ. Պոլսոյ Հոմ դպրոցէն շրջանաւարտ եղած 1872ին, հինգ տարի այդ դպրոցին իբր մայրիկը. ծառայելէ ետքը ամուսնացած է 1884ին: Իր Կարինի կեանքին մասին զբօսաշրջիկ մը (H. F. B. Lynch) սապէս կ'ըսէ. «Տիկ. Ձէյմպըրս, Տր. Ձէյմպըրսի արժանի կողակիցը, է՛ն դեղեցիկ և հեղահամբոյր կիներէն մէկն է, որ զբաղած է ազգական դաստիարակութեամբ: Ասիկա թանկագին օրինակ մըն է Հայ կիներու համար: Մինչ կը բաժնուէի այդ ազնիւ միսիօնար կիներու և մարգերու շրջանակէն՝ շատ հաճելի էր ինծի խորհիլ անոնց ջանքերուն մասին՝ իրենց բնական տեղերուն մէջ կեանքի չափանիշը բարձրացնելու և առողջ միջավայր մը յառաջ բերելու համար»:

Տիկ. Ձէյմպըրս իր Կարին եղածէն շատ աւելի ազդու եղած է Ատանայի մէջ: Իր տան մէջ տեսնուած կանոնաւորութեամբ և մաքրութեամբ, իր ամուսնին հանդէպ տաժած յարգանքով և անոր հետ գործակցութեամբ, առտնին տնտեսութեան, հապուստի և ուտեստի

մէջ իր խնայողութեամբը, իր բազմաթիւ հիւրերուն ցուցացած մեծարանքովը, նոր հարսերուն և երիտասարդ կիներուն ըրած մայրական օգտակար թելադրութիւններովը, եղական ազդեցութիւն մը ունեցած է: Մանաւանդ, երբ իմացաւ 1886 Հոկ. 19ին ծնած միակ որդիին մահը, որ պատահեցաւ 1902 Մայիս 9ին Մոն Պլանի վրայ պտըտած պահուէն ճօժ օտք բարձրութենէ մը վար գահավիժելովը, հիանալի անձնատուութիւն մը ցուցուց Նախախնամութեան, որ պատիւ մ'էր Քրիստոսի ինչպէս նաև ապացոյցը թէ ինքը տէրն է արտաքնապէս տեսնուածէն շատ աւելի խոր կրօնքի մը:

Գալով Տր. Ձէյմպըրսի՝ արդար ըլլալու համար պէտք է ըսեմ որ առաջին օրերուն մէջ ժողովուրդը յուսախար ըրած է իր ակնկալութիւններուն մէջ: Բանջի իրմէ առաջ շատ մը միսիօնարներ իրենց մեծ գործերովը թէ՛ կառավարութեան և թէ՛ ժողովուրդին յարգանքին արժանացիր էին: Ժողովուրդը Տր. Ձէյմպըրսի հասակին (6 օտք 3 մատ) հետ համեմատական չլացուցիչ գործեր կ'ակնկալէին իրմէ: Բայց տեսան որ անիկա սակաւախօս, քիչ անգամ ժպտող, և իբր թէ քիչ գործող մէկն է: Եւ մանաւանդ ժողովուրդին հետ չէր կրնար սերտ շփուժ ունենալ, իր տկար թրքերէնին պատճառով: Բայց քանի օրեր անցան տեսան թէ անիկա ոչ միայն մեծ ըլլալու չափ՝ այլ մեծցնելու չափ գործող մըն է, թէ ամէն մէկը իր կտրելին ընելու ստիպող մը, և պակասը լրացնելու աշխատող մէկն է: Իրմէ առաջ Կիլիկիոյ Միութեան Ատանայի Շրջանին բոլոր եկեղեցիներն ու դպրոցները Պորտի կը պատկանէին և անոնց վարչութեան համար Պորտը պատասխանատու էր և ժողովուրդը Պորտի օգնելու կանչուած էր միայն: Տր. Ձէյմպըրս շրջեց այս ըսկզբունքը և ըսաւ. «Գործը և անոր վարչութիւնը ժողովուրդին կը պատկանին,

որ ա՛հէն կերպով պէտք է ստանձնէ բոլոր պատասխանատուութիւնը, և իթէ ունէ պակաս մը մնայ միսիօնարը պէտք է կարելի օգնութիւնը ընծայէ:» Ահա այս կերպով Ատանայի Շրջանին 10ի չափ եկեղեցիները յառաջ մղեց և յաջողեցաւ գրեթէ անոնց բոլորն ալ ելեմբտապէս ինքնաբաւ ընելու: Եկեղեցական և դպրոցական շէնքերու համար ալ Նոյն սկզբունքը կիրարկեց: Աւելի ըլլալով անիկա շէնքից փոքր եկեղեցիներու հանդէպ մեծ եկեղեցիներու պատասխանատուութիւնը, և պատճառ եղաւ որ Ատանայի եկեղեցւոյն կիները՝ Էօզէրլիի և Ճիհանի եկեղեցիներուն, և Տարսանի եկեղեցին ալ՝ Գոզ-Սլուզի եկեղեցիին համար աղօթին, ջանան, և նիւթապէս օգնեն:

Անիկա յաջողեցաւ Ատանայի մէջ Ե. Բ. Ընկերակցութեան մէկ մասնաճիւղը հաստատել տալ, քաղաքին այդ մասին ունեցած մեծ պէտքը քանիցս գրելով տարբեր կեդրոններուն: Եւ այս նպատակաւ երիտասարդ մը կարճ ատենի համար Զուլիցերիս, Ֆրանսա և Անգլիա ղրկելով այս գործին համար պատրաստել տուաւ և Թուրքիոյ մէջ իբր առաջին թոշակաւոր վարիչ գործի հրաւիրեց, և ապա քաղաքին կեդրոնը Ե. Բ. Ընկերակցութեան համար գետին մը գընուած և այդ նպատակին յատկացուելու պայմանաւ բարեկամի մը կողմանէ հաւար ոսկի խոստացուած էր:

1909 Ապրիլ 14-15ին և 25-27ին պատահող երկու սարսուղիկիկ ջարդերու միջոցին 20,000 Հայեր սպաննուեցան: Ասոնց իբր արդիւնքը յառաջ եկող այրիներու, որբերու, անօթիներու և թշուառներու բանակ մը Տր. Չէյմպլըսի գործունէութեան համար ասպարէզ բացաւ: Ասիկա թէպէտ Հայոց ջարդըն էր սակայն կարգ մը Ասորիներ և Քաղէպցիներ, երկու Ամերիկացի միսիօնարներ ալ զոհերու մէջ կը գտնը-

ւէին, իսկ մէկ երրորդ Ամերիկացի մ'ալ հրաշքով մը կրցաւ ազատել: Տր. Չէյմպլըս հակառակ մահուան վտանգին արեան ծարուսի խուժանին մէջ կը պըտտէր և Հայերը փրկելու կ'աշխատէր: Աչքովս տեսած տեսարաններս նկարագրելով չեմ ուզեր զանոնք վերարթնցնել անոր մտքին մէջ. միայն ըսեմ որ դասընկերս ամէն ճիգի հակառակ հրացանով և դաշոյնով սպաննուեցաւ Տր. Չէյմպլըսի գրկին մէջ, և մինչ գինքն ալ կ'սպառնային զէնքով սպաննել, նա տակաւին կ'աշխատէր մէկ ուրիշ Թուրք մը արկիլիլ արիւն թափելէ:

Այս գէպերը հեռագրով Ամերիկա իմացնել և անոնց մասին տեղեկագրութիւն պատրաստել շատ կարեւոր էր, մինչ այս ահալի տեսարանները իրարու կը յաջորդէին: Երիտասարդ Ամերիկացի մը հանրային կարծիքը արտայայտելու համար գրած էր թէ «Հայերն ալ մասամբ պատճառ եղան»: Բայց Տր. Չէյմպլըս այդ նախադասութիւնը ջնջել տուած էր ըսելով՝ «Ո՛չ, մեզի անկ չէ պատճառի մասին ճառել, այլ պէտք էնք միայն ներկայ վիճակը յայտնել, չենք գիտեր թէ երևոյթներու հախի ինչպիսի՛ բաներ թաքնուած են»: Ետքը հասկըցուեցաւ թէ այդ գաղափարը սխալ է. բայց իթէ Տր. Չէյմպլըսի ստորագրութեամբ այդ տեղեկագրութիւնը զրկուած ըլլար՝ հանրային կարծիքին առջեւ Թուրք կառավարութիւնը պիտի արդարանար իսկ Հայերը յանցապարտ պիտի հռչակուէին: Զարդի թաքուն պատճառները քանի երեւան կ'ելլէին, Թուրքիոյ վարչապետը կ'ստիպուէր վերջապէս պաշտօնապէս հրատարակելու Հայերու անմեղութիւնը. այն ատեն Հայերը կախաղան հանելէ դադրելով սկսան անոնց օգնել, և Անգլիական հիւպատոսարանը ապաստանած մեր շատ մը կարեւոր գէմքերն ալ փրկուեցան:

Զարդը երկու մեծ հարցեր յառաջ

բերաւ: Ասոնցմէ առաջինն էր անթիւ վիրաւորներու և հիւանդներու դատմանու մը: Առժամայ կտրկադրութիւններէն զատ տեւական հիւանդանոցի մը անհրաժեշտ պէտք կար: Տր. Չէյմպըրս անցեալ սովէն ֆնացած մերկ շէնքը խնամակալութենէն և գետինը բողբոջականներէն պահանջեց և առաւ. շատ դրամ ծախսելով զանիկա նախանձելի վիճակի մը վերածեց. ապա մի քանի մարդիկ գետինը և շէնքը զբաւելու համար ժողովուրդը զբոսեցին և սխալ տարածաշուրթիւններ հանեցին և Մր. Չէյմպըրսը մինչև իսկ կառավարութեան ձգելու զիջեցան: Շատ մը աղմուկէ վերջ կուսակալ Ճէմալ Պէյի հնարամտութեամբը և Տր. Չէյմպըրսի հանդէպ անոր տաժած յարգանքին շնորհիւ թէպէտ խնդիրը փակուեցաւ, բայց անոր թողած բիծը մինչև այսօր անջինջ կը մնայ:

Հակառակ այս բոլորին տակաւին ան կը սիրէր Հայերը եւ զանոնք կը պաշտպանէր նորահաս միսթոնարներու եւ հանրութեան առջեւ: Իրախօսարուհի մը ինծի ըսաւ. «Մենք կը վախնանք Տր. Չէյմպըրսի առջեւ Հայերու հակառակ բան մը ըսելու, քանզի դիտենք որ անիկա ձեր տեւական պաշտպան փաստաբանն է:» Անգլիական թերթի մը մէջ ճամբորդողի մը կողմանէ Հայերու դէմ յօդուած մը գրուած էր: Տր. Չէյմպըրս անմիջապէս գրիչը ձեռք առաւ եւ յօդուածը գրողին եւ զանիկա հիւրնկալող թերթին համար անմաքսելի պատասխան մը գրեց: Այսու հանգերձ իր այս ծառայութիւնը երբեք չէ յայտնած ունէ Հայուն: Քանզի նա մեզ մեզի գովելու մէջ թէպէտ ժլատ, բայց մեր բացակայութեանը մեզ պաշտպանելու մէջ առատաձեռն բարեկամ եղած է:

Զարդի յառաջ բերած երկրորդ խնդիրն էր անօթի և թշուառ 20000 հոգիներու ապրուստը, այրած տուններու

և եկեղեցիներու կառուցումը: Ժամանակ չկայ մանրամասնութեանց մտնելու: Տր. Չէյմպըրսի նախագահութեան տակ խնամատար մարմին մը կազմուեցաւ, որ գուրսէն դրամ պիտի գտնէր, փտահելի ձեռքերով հաց, հագուստ, անկողին պիտի բաշխէր, արհեստաւորներու գործիք և վաճառականներու զրամագլուխ պիտի բաժնէր: Դիւրին է ըմբռնել թէ ինչ մեծ կարողութիւն, հաստատամտութիւն և իմաստութիւն կը պահանջէր այսպիսի գործ մը թէ՛ գիւղերու եւ թէ՛ քաղաքներու մէջ: Չենք ուզեր ըսել թէ նա այս գործերէն ունէ մէկը առանձին կատարեց. բայց ո՞վ չի գիտեր թէ պղտիկ մարդու մը գործը չէ՝ տարբեր աղբերու եւ կրօններու, Թուրքի եւ Հայու, կառավարութեան եւ ժողովուրդի, Եւրոպայի եւ Թուրքիոյ մէջտեղ կենալ եւ առանց երկու կողմերէն ունէ մէկուն վստահութիւնը ի դերեւ հանելու գործել կարենալ: Ճէմալ Պէյ, հիանալով այս կարողութեան եւ ուղղամտութեան վրայ, Տր. Չէյմպըրսի հանդէպ իր յարգանքը յայտնած եղաւ անոր յանձնելով 4000 տսկի, որ կիւներու համար ասեղի ձեռագործ բանայ:

Անիկա կրցաւ մեր քարոզիչներէն մէկը բանալն, իսկ ուրիշները Ճէմալ Պէյի զայրոյթին գոհ ըլլալէ ազատել՝ իր կառավարութեան հետ ունեցած բարեոք յարաբերութեան պատճառաւ: Հետեւաբար բնական է որ մեր շատ մը կարեւոր գէմքերը, որոնք այսօր Եւրոպա, Ամերիկա և Սուրիա կը գտնուին, յարգեն Տր. Չէյմպըրսի անուանը:

Վերջին կէտ մ'ալ: Պատերազմի միջոցին երբ ան երկրէն արտաքսուեցաւ Ամերիկայի եւ Զուլիցերիոյ մէջ շարունակեց ի նպաստ Հայերու գործել: Անիկա նախագահ Ուիլսոնի դասընկերը ըլլալով ուղղակի անոր գրած եւ Հայերու համար օգնութիւն խնդրած եւ անկէ

«Իր ֆիզիզական ոյժը սպառած ըլլալուն համար գործէ



փառուած, եւ իր սիրած Հայերը մինչեւ վերջը սիրող»

ՎԵՐ. ՏՐ. ԶԵՅՄՊԸՐՍԻ ՎԵՐՋԻՆ ՄԷԿ ՊԱՏԿԵՐԸ

պատասխան առած էր: Պատերազմը հազիւ վերջացած անիկա Ատանա վերագործաւ եւ սկսաւ եկեղեցիները եւ դըպրոցները վերակենդանացնել եւ գիւղերու եւ քաղաքներու մէջ Րիլիֆի իրր տեղական վարիչը ծառայել: Թէպէտ իր ծառայած 20-30 եկեղեցիներէն ոչ մէկն իսկ հիմա գոյութիւն չունի, անոնց ժողովուրդները ցրուած են, և թէպէտ զինքը տեսնող և վայելող սերունդը անհետացած կամ անհետանալու վրայ է, կ'ազգեմ զինքը քիչ ճանչցող նոր սերունդին առջև վկայել թէ այս պատկառելի անձնաւորութիւնը, որ իր ֆիզիզական ոյժը սպառած ըլլալուն համար գործէ քաջուած է, մեզի համար Աստուծոյ մէկ շնորհքը եղած է, մեզի համար ապրած, մեզի համար գործած և մաշած է: Եւ հիմա իսկ մեզի համար խորհող և աղօթող, և իր սիրած Հայերը մինչև վերջը սիրող բարեկամ մըն է:

Ինքը և ազնուամիայլ տիկինը այն-

պիսի գաւառներ կրթած են որ պղտիկ դուստրը Տիկ. Պլէյզտըլ (Blaisdell) մեծ ծառայութիւններ ըրած է Հայ գաղթականներու Պէյրութ հասնելուն, իսկ մեծ դուստրը Միսիս Սիլի Նեղը մնացած ունէ Հայ կնոջ համար մայր մը եղած է: Նոյն իսկ անոր էրիկը, Մր. Սիլի, բոլոր Հայերու և օտարներու կողմանէ ճանչցուած է իբր ամէն Հայ երիտասարդի բարեկամը: Այնպէս որ բոլոր ընտանիքը յայտնող նշանը հայասիրութիւն եղած է:

Երբ Տր. Զէյմպըրսի կեանքը ուսումնասիրեցի Եփայիի մէկ համարը (32. 2) հասկնալ ինծի համար շատ դիւրին եղած է: «Աս մարդը հովի գէմ գնող պատասպարանի պէս, փոթորիկի դէմ գնող ծածկոցի պէս, չոր տեղը հող ջուրի վտակներու պէս, և ծարաւուտ երկրի մէջ մեծ ապառաժի մը հովանիին պէս պիտի ըլլայ:»

Ահա այս մարգարէութիւնը իրականացած է Տր. Զէյմպըրսի մեր մէջ ան-

ցուցած 50 տարիներու միջոցին և այս կերպով ան մեզ անվճարելի պարտքի մը տակ գրած է Աստուծոյ և իրեն հանդէպ:
Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԸՆԿԵՐՆԵՐԴ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

Առակ. 13. 20.

Ի՞նչ զարմանալի գիրք մըն է Ս. Դիրքը: Ի՞նչ կերպով ալ ընդունիս դայն պէտք է սա չափին համոզուիս թէ ան ամէն տեղ, ամէն մարդուն համար և միշտ Աստուածային գիրք մ'է, որ «օգտակար է սորվելու, յանդիմանելու, շտկելու և արգարութիւն խրատելու համար»: Անիկա ոչ միայն ուժաթափ երիտասարդներու յինարանն է, այլ նաեւ ջուրի պէս հոսող և կրակի պէս այրող զօրաւոր երիտասարդներու «ճշմարիտ առաջնորդն է, որ անոնց ընթացքը կը մաքրէ և ոտքերուն ճրագ է»:

Ս. Դիրքը մեզի կը սորվեցնէ թէ ի՞նչ պէս պէտք է ընկեր ընտրել, ինչպէս որ ան մեզ կ'զգուշացնէ մեղսալից ամէն բանէ: «Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ»: Թէպէտ մեզմէ ամէն մէկը պէտք է ուշադրութեան առնէ այս շատ կարեւոր ճշմարտութիւնը, բայց ան ամէնէն աւելի երիտասարդներուն համար հայրական խրատ մ'է, որուն շատ պէտք ունին: Սորվելիք մեծ ճշմարտութիւն մը կը պարունակէ Սենեկայի սա խօսքը թէ «մարդը առանձինն ապրելու համար պէտք է կա'մ Աստուած կա'մ անասուն ըլլայ», թէպէտ քիչ մը չափազանցեալ կը թուի ան: Մարդուն մէջ բնածին միտում մ'է ընկեր գտնել, բարեկամներ փնտռել, անոնց հետ պտըտիլ և այլն: Ասիկա ամենազօրաւոր կերպով կը յայտնուի երիտասարդութեան շրջանի միջոցին:

Նիւթիս ամենասերտ աղերսը նկատ

ւագրի կազմութեան հետ է: Ընտանիքը, դպրոցը, եկեղեցին և միջավայրը, ուղղակի կերպով ասոր կ'ազդեն թէպէտ, և սակայն մեր յարաբերած ընկերներուն չափ ազդեցիկ չեն: Իմ տեսած շատ մը զէպքերէն հետեւցնելով կրնամ ըսել՝ թէ ընտանիքը, դպրոցն ու եկեղեցին որչափ ալ լաւ ըլլան դուն գէշ կ'ըլլաս՝ եթէ գէշ ընկերի մը ազդեցութեան ենթարկուած ես, բայց երբ անոնք ինկած իսկ ըլլան, ուշ կամ կանուխ քու մէջդ լաւ նկարագիր մը երևան կուգայ եթէ լաւ մէկու մը կ'ընկերանաս:

Սաատի, Պարսիկ բանաստեղծը, օր մը պարտէզի մէջ պտըտելու ատեն կը հարցնէ շատ անուշաբոյր տերեւի մը. «Դուն վա՞րդ ես թէ սմբուլ»: Տերեւը կը պատասխանէ թէ ինք ո'չ վարդ է ո'չ ալ սմբուլ, այլ՝ գեղեցիկ ծաղիկներու քով գտնուած տերեւ մը:

Անգլիացի բանաստեղծ Կոլտսմիթի շուկայի մը մէջ ծախուող նարգիսի մը շատ անախորժ հոտէն ազդուած կը հարցնէ. «Դուն իսկական նարգիս ես, կամ թէ ի՞նչ ես»: Ծաղիկը կը պատասխանէ. «Ես սեպ ժայռերու զարդը եւ քովէս անցնողներուն անոյշ բոյր էի: Բայց անգութ ձեռքեր զիս տեղէս հանելով աղբանոցի մը մէջ տնկեցին...»:

Դէ՛շ ընկերը ուղղակի սատանայի պատգամաւորն է: Անիկա այն օձն է որ Եդեմ մտնելով մեր առաջին ծնողքը խաբեց և պատճառ եղաւ որ անոնք իրենց հանգիստը կորսնցնէին պարտէզէն դուրս վռնտուելով: Անիկա բարձրը կ'ստորնացնէ, մաքուրը կը պղծէ, կ'աւերէ: Ահ, որչափ անգութ է գէշ ընկերը, որ հոգիին տաճարը կ'եղծանէ, սուր դատողութիւնը կը բթացնէ, հոգին դժոխքի կրակին կը մատնէ:

Երբեք չեմ մոռնար խեղճ մօր մը սա աղիւսարչ խօսքերը, զոր կ'ըսէր մինչ նա կուլար իր միտի գաւազին դագաղին

վրայ: Ախ, տակաւին չբացուած թար-
շամող կոկոնս, քու բարձր հասակդ, ուշիմ
միտքդ, դրախտաժայռի հողիդ կործանե-
ցան գէշ ընկերի մը պատճառաւ: Ախ,
աղաա, սիրելի՛ տղաս:» Այս ողբը իրա-
պէս աւելի սրտաճմլիկ է քան Դաւիթի
ողբը Արիսողոմի վրայ:

Քրմիագէտը կ'ըսէ թէ մէկ կրամ
ծանրութեամբ այսօրինը կրնայ իրմէ 7000
անգամ աւելի ծանր ջուրին գոյնը փո-
խել: Երանի թէ հասկնայինք որ մեր
զաւակներուն հետ յարաբերող ընկեր-
ներուն կամ մտերիմներուն ազդեցու-
թիւնը զիրենք դէպի սրբութիւն թէ
պղծութիւն կ'առաջնորդէ: Այս հարցը
կ'արժէ որ մեր խորհրդածութեան, ու-
շագրութեան և աղօթքին նիւթ ընենք:
Քարոզիչները, ուսուցիչները և ծնողք-
ները կը պարտին այս վտանգէն զգու-
շացնել մեր զաւակները, որոնք վաղ-
ուան ժողովուրդը պիտի շինեն:

Գէշ ընկերութիւն Սամփոռնը կ'առաջ-
նորդէ մահուան, կեապաշտ ընկերները
Սողոմոնը կը մղեն հեռանալու Աստուծ-
մէ, Ռոբոզամի անփորձ ընկերները պատ-
ճառ կ'ըլլան անոր երկրին մեծ մասին
կորուստին, Քահանայի որդին Սեղեկիայի
նման կեղծ մարգարէն պատճառ կ'ըլլայ
որ Աքաաբ իր թշնամիներէն պարտուի
և սպաննուի, և սրտին բարեկամները
տան սիրելին կը վերածեն անառակ որ-
դի:

Նշանաւոր դատաւոր Պըթլըր 16 տա-
րեկան պատանին խրատելով կ'ըսէ, «Ե-
թէ ես երիտասարդութեանս տակն գէշ
ընկերներու հետ յարաբերէի, անոնց
խօսքին անսայի: հիմա փոխանակ դա-
տաւորի աթոռը պրաւելու դատապարտ-
եալի աթոռին վրայ պիտի բազմէի:» Որ-
չափ ցաւալի է տեսնել թէ մեր այն զա-
ւակները որոնց մտքէն և կարողութենէն
աշխարհ կրնայ օրհնութիւն ստանալ,
չբացուած վարդերու և երգելու չսկսած
սոխակներու նման կը փճանան:

«Մարդուն սիրտը շատ խոր է, ո՞վ
զայն կրնայ հասկնալ:» Յիրաւի մար-
դը հասկնալ շատ դժուար է եթէ իրեն
նայիս, բայց շատ դիւրին է եթէ անոր
յարաբերած անհատը զիտես: Մեր ըն-
կերները մեր փորձաքարն են: «Ըսէ
ինծի ընկերդ, և Ըսեմ քեզի նկարա-
զիրդ:» Երուսաղէմ թռչուն մը եկած
էր, զոր բռնելով մանուկները Բաբբին
բերին հարցնելու թէ զայն ուտել ներե-
լի՞ էր թէ ոչ: Բաբբին հրամայեց որ
զայն վանդակի մը մէջ բանտարկին և
տանիքը գնեն: Գրեթէ շաբաթ մը ան-
ցաւ բայց ուէ թռչուն մը վանդակին չը-
մօտեցաւ: Ապա Եզրիպտոսի կողմէն ազ-
աւ մը եկաւ և վանդակին վրայ թառե-
լով սկսաւ կռաւել: Բաբբին հրամայեց
որ թռչունը արձակեն, քանզի տն պիղծ
էր, որովհետեւ ազաւն ալ պիղծ էր:

Ընկերի մը ընտրութիւնը որչափ զբո-
ւար, բայց որչափ ալ կարեւոր է: Նա-
յլ՝ առ մեղուին, որ իր փեթակէն շատ
հեռու լեռնէ լեռ, ձորէ ձոր կը պտըտի
ծաղիկ փնտռելու, բայց թռնաւոր ծա-
ղիկի մը վրան չի նստիր որչափ ալ հը-
րապտէրիչ երեւնայ ան: Անիկա գեղե-
ցիկը չի փնտռեր, այլ՝ անոյշ նեկտարը:

Երանի թէ զիտնային որ, ամէն ժըպ-
տող գէմք խաղաղութիւն չի բերեր,

Ամէն քաղցր բառ ներդաշնակութիւն
չի բերեր,

Ամէն արուող դրամ հարստութիւն չի
բերեր,

Ամէն փայլուն իր, զգուշացիր, ոսկի
չ'իւլեր:

Այո մեր մէջ բնածին այս փափաքին
մահացումը կարելի է, և թէ այսպիսի
ձեռնարկ մը շատ վտանգաւոր է, բայց
ուշագրութիւն ըրէ որ ընտրութիւնք
բարի և շիտակ ըլլայ: Ծնողները պէտք
է աշխատին որ իրենց զաւակները լաւ
նկարագրի տէր և մաքուր ընկերներու
հետ յարաբերին, պտըտին և ուսանին:

Ճշմարիտ ընկերակցութիւնը պէտք է Յիսուսի և Յիսուսը սիրողներու հետ ըլլայ: «Բարբի, ո՞ւր կը բնակիս» Ահ: Ի՞նչ անուշ է այս փափաքը և ի՞նչ հաճելի է այս հարցումը: Որչափ ուրա-

խառնիք է Յիսուսը և Յիսուսինները գտնել և անոնց հետ հոգեւոր կեանքի ուրախութիւնն ու խնդութիւնը վայելել:

Մեր բանաստեղծներէն Աշուղ Զիւան իսկ սապէս երգած է. —

Բարի գեղեցիկ առաքինի ընկերը մարդուն,
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն.
Ի՛նչ, մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր
Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:
Կեանքդ նուիրես ընկերի լաւին, քիչ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, աստուածավախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:
Թշնամիները իր վրայ քալած ժամանակը,
Կտրիճ հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր աստուածավախ,
Զի սպիտակիւ ամենեւին մէկ հերը մարդուն:
Պէյրութ.

ԵՆՈՎՔ ԿԷՕՔԿԷՕԶԵԱՆ

ԵՐԱՆԻՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

1. Երանի այն անդամին որ գիտէ թէ ինչ է աղօթածողովը:
2. Երանի այն անդամին որ Կիրակի յետ միջօրէի Աւետարանի քար լուծեան պահուն իր հովիւը կը յիշէ:
3. Երանի անոր որ կ'որոշէ կամ կը խոստովանի հոգեւոր գործ մ'ընել և կը յաջողի զայն կատարել:
4. Երանի անոր որ իր եկեղեցիին պաշտօնական թերթին կը բաժանորդագրուի:
5. Երանի անոր որուն գործունէութեան դաշտը բոլոր աշխարհն է:
6. Երանի անոր որուն կրօնական կեանքը շաբթուան բոլոր օրերուն վրայ կը տարածուի:
7. Երանի անոր որ իր եկեղեցիին մէջ հոգեւոր եռանդ կ'ստեղծէ և զայն քննադատելով չ'զբաղիր:
8. Մանաւանդ երանի անոր որ ինչպէս իր սրտով նոյնպէս նաեւ իր քսակով կը սիրէ զԱստուած:

10. Երանի անոր որ առանց շարքէն չեղեղու կը շարունակէ քալելու:

Թրգ. «Էլ էսթանտարթէ էվան-
կելիգօ» սպանիէն թերթէն
Պուհնուս Արիս Թ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Զանազան յարանուանութեանց պատկանող Բողոքական Եկեղեցիներու միջև միութեան մասին խորհրդակցութիւններ եռանդով յառաջ կը տարուին: Գանատայի մէջ Մէթոտական, Երիցական և Ժողովական եկեղեցիներ 1925 ին կազմած էին Գանատայի Միացեալ եկեղեցին: Սկովտիոյ մէջ ալ միացեալ եկեղեցի մը յառաջ եկաւ Սկովտիոյ Եկեղեցին անունով: Սկովտիոյ Միացեալ Ազատ Եկեղեցիին մէկ փոքր մասը սակայն իր հին անունով կը շարունակէ իր անջատ գոյութիւնը: Մ. Նահանգաց մէջ Ժողովական Բրիստոնէական եկե-

ղեցիները իրենց մէջ գործակցութիւն ստեղծած են և կը յուսան այս տարի գործակցութիւնը կատարեալ միութեան փոխել: Դարձեալ Մ. Նահանգաց Երկրացական Մէթոտական և Եպիսկոպոսական եկեղեցիները ներկայիս խորհրդակցութիւններ կը կատարեն մէկ եկեղեցի մը կազմելու համար: Եթէ այս վերջինը յաջողի յառաջ գալիք եկեղեցին պիտի ունենայ 13 միլիոն անդամներ և մօտ 11 միլիոն Կ. Դպրոցի աշակերտներ:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՍՔՈՒԼ ԱՎ ՐԻԼԻՃԸՆԷ ԼՈՒՐԵՐ

Այս տարի վեց աշակերտներ ուսումնաւարտ եղած են, որոնցմէ երեքը Հայ, երկուքը Պուլկար և մէկը Յոյն են: Աւագ Գէորգ Աւագեան, Սուրէն Մ. Վեցիկեան և Ֆիլէթհէոս Զիգաս (Յոյն) Աստուածաբանական ճիւղէն, Տիկ. Հայկուհի Ֆարաճեան, Օր. Բինա Էլիէվա (Պուլկար) և Օր. Վէրա Անկէլովա (Պուլկար) կրօնական դաստիարակութեան ճիւղէն, վկայուած են: Պագալորիայի քարոզը Մայիս 25ին տրուած է Փրոֆ. Լ. Լեւոնեանի կողմէ, «Զանոնք իրենց պտուղներէն պիտի ճանչնաք» նիւթին շուրջ: Մայիս 30ին կատարուած է վկայականաց բաշխումի հանդէսը, ուր «Անատոլիա Գոլէճ» ի նախագահը, Տր. Հուսայթ, «Միատեղ ապրելու արուեստը» նիւթին վրայ խօսած է:

Աշակերտները ամառնային գործի համար տարբեր տեղեր գացած են: Դըպրոցը կը պահանջէ որ ամէն ուսանող ամառուան արձակուրդին չորս ամիսներուն միջոցին եղեղեցական գործերու մէջ գործնական փորձառութեան տիրանայ: Գործի մէջ սորվիլ զրքերէ եւ ուսուցիչներէ սորվելու չափ կարեւոր է:

Այս տարուան ընթացաւարտներէն Ֆիլէթհէոս Զիգաս Յոյն Բողոքական եւ

րիտասարդ մ'է, որ Յոյն Աւետ. Երիցական Սինոդի կողմանէ իր հոգեւոր փորձառութեան և կրօնական վարդապետութեան մասին քննուած և ամէն կերպով զոհարուցիչ գտնուած է, Մակեդոնիա զրկուած է գործելու համար: Պր. Զիգաս հոն պիտի զբաղի այդ տեղի Յոյն Աւետ. փոքր համայնքներուն եւ մանաւանդ Իսլամներուն մէջ հոգեւոր ծառայութիւն կատարելով:

Յառաջիկայ Դպրոցական տարեշրջանին համար նոր կարգ մը պիտի ընդունուի դպրոցին մէջ: Նոր դիմումներ կը շարունակեն հասնիլ: Դպրոցին նախագահը Մր. Փայ տարի մը եւս Ամերիկա պիտի մնայ իր անհանգստութեան պատճառաւ, և Մր. Հարլօ, Իգմիրի նախկին միսիօնարներէն, տարի մը պիտի ծառայէ: Անցեալին մէջ Մր. Հարլոյի հոգեւոր ազդեցութիւնը շատ մեծ եղած է երիտասարդներու վրայ:

Փրոֆ. Լ. Լեւոնեան այս ամառ մի քանի շաբաթներ պիտի անցնէ Սուրիոյ մէջ:

ԼՈՒՐԵՐ ԳԱՀԻՐԷՆ

Պատ. Կ. Ս. Ֆարաճեան, որ մէկ տարուան համար հրաւիրուած էր Գահիրէի Հայ Աւետ. եկեղեցիի կողմանէ, քաղաքէն մեկնած է Յունիս 26ին, Սիւլանիկի Հայ Աւետ. եկեղեցւոյ քարոզչութիւնը ստանձնած ըլլալով: Իր մեկնումին առիթով երեկոյթ մը սարքուած է եկեղեցական և Գաղաքական ժողովներու կողմէ, ներկայութեամբ եկեղեցւոյ բոլոր գործիչներուն, շուրջ յիսուն հոգի:

Գահիրէի Հայ Աւետ. եկեղեցւոյ քարոզիչը Պատ. Հ. Յ. Համբարձումեան, որ յետ-ընթացաւարտի ուսում առնելուն պատակաւ մէկ տարուան համար Օպէրլինի Աստուածաբանական Ճեմարանը գացած էր, յաջողութեամբ լրացուցած է իր ընթացքը Յունիս 2ին եւ Մագիստրոս Աստուածաբանութեան (M. of Theology)

տիտղոսին արժանացած է: Յիշեալը Յուլիոս 27ին Նիւ Եորքի Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովիւ Վեր. Ա. Կ. Պետրիկեանի նախաձեռնութեամբ եւ ուրիշ հովիւներու մասնակցութեամբ հովիւ ձեռնադրուած է: Զեռնադրութեան արարողութիւնը շատ ներշնչիչ եղած է:

Յուլիոս 23-30 միջոցին դասախօսութեանց շարք մը պիտի տրուի ալիւալլի եկեղեցական և կրօնական խնդիրներու շուրջ, Հալէպ, Պոյզ Հայ Աթուրի շէնքը, ուր ներկայ պիտի ըլլան Սուրբիոյ բոլոր քարոզիչներն ու հովիւները: Պիտի խօսին Վեր. Մ. Կ. Փափազեան, Տր. Ճ. Է. Մէրիլ և Փրոֆ. Լ. Լեւոնեան:

Այս տարի Երուսաղէմի Ս. Յակոբայ տաճարին մէջ ինը սարկաւազներ քահանայական ձեռնադրութիւն, օծում և նոյն օրուան երեկոյին արեղայութեան վեղար ստացած են:

Այս տարի Թեհրանի Աղջկանց Ամերիկեան Գոլէճին շրջանաւարտներուն մէջ կը գտնուի հայունի մը՝ Օր. Մէրի Օէն: Թեհրանի Ամերիկեան և աղջկանց գոլէճները պիտի ընդարձակուին կ'ըսէ «Վերածնունդ»:

Տիար Ներսէս Կիւլպէնկեան, գաւազ կը հանգուցեալ Տիար Պատրիկ Կիւլպէնկեանի, իր վաղամեռ զաւակը Պօղոսին ի յիշատակ կրթարան մը հաստատել կուտայ Հալէպ, վերատեսչութեամբ Տ. Ա. Եպիս. Սիւրմէեանի: Դպրոցս պիտի ըլլայ երկսեռ, քառամեայ նախակրթարանի եւ մանկապարտէզի եւ արհեստանոցի բաժիններով:

Յուլիոս 6ին, Կիրակի, Ս. Բառ. Մանկանց Եկեղեցւոյ մէջ, Հալէպ, հոգեհանգիստ կատարուեցաւ Պօղոս Փաշա Նուպարի մահուան առթիւ, հովանաւորութեամբ Վեհ. Կաթողիկոսի: Ապա Ազգային Մանկապարտէզի շէնքին մէջ սգահանողէս կատար-

ուեցաւ նախաձեռնութեամբ Բարեգործականի տեղական Մասնաճիւղին: Բարեգործականի կողմանէ խօսեցաւ Տիար Ե. Զօրեան ներկայացնելով հանգուցեալը իբր մեծ մարդ, իբր մեծ Հայ և իբր մեծ բարերար: Վեր. Կ. Յարութիւնեան խօսեցաւ մեծութեան յատկանիշին վրայ: Հայր Գաբրիէլ Վրդ. Գաւապեան հանգուցեալին բարի մէկ նկարագրականը տուաւ: Ամէնէն վերջը Վեհ. Հայրապետը զրուիւն մը կարդաց: Օր. Ազնիւ Մանուկեան, Տիար Յ. Նալպանտեան և խումբը իրենց բաժինը բերին պարագային յարմար եղանակներով:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանին այս տարուան տարբեր ճիւղերուն 112 ընթացաւարտներէն 19ը Հայ են, որոնցմէ 7 հիւանդապահ, — Օր. Օր. Մ. Պապուկեան, Ալպէրթա Պէրէճիքեան, Ճոզէֆին Յ. Պիւլպիւլեան, Ազնիւ Կիրակոսեան, Գեղանուշ Իրրանոսեան, Աննա Նարգիսեան, Էմէլիա Նազարեան, մէկը մանկաբարձ, — Օր. Յլորա Կանիմեան, երեքը Պսակաւոր Արուեստից (B.A.) տիտղոսով, — Պ. Պ. Սարգիս Ապտալեան, Վահան Տերունեան, Հրանտ Մարգարեան, երեքը պսակաւոր բժշկական արուեստից տիտղոսով (B. A. M.), — Արմէն Գուլումճեան, Արմէնուհի Ս. Մկրտիչեան և Վահրամ Գ. Սարգիսեան, մէկը (B. B. A.) տիտղոսով, — Համբարձում Տէր Յակոբեան, մէկը դեղագործութեան ճիւղէն, — Մակարոս Յարութիւնեան, և երեքը բժշկական ճիւղէն (M. D.), — Տիարք Տիգրան Ա. Պէրպէրեան պատուանիշով, Երուսաղ Ս. Գըրալեան և Լեւոն Ա. Եէնի Գոմշուեան:

Պէյրութի Հայ-Ամերիկեան Աղջկանց Վարժարանը, որ մինչեւ վերջերս կը կառավարուէր Միս Ուէպի կողմանէ, բայց վերջերս Միս Ճելսընի կողմէ, ազգին ընծայեց 20 ընթացաւարտուհիներ: Աւարտական հանդէսը կատարուեցաւ

Յունիս 29 ին նախագահութեամբ Վեր. Ե. Կէօքկէօզեանի, Ա. Եկեղեցիի սրահը. խօսեցան Տր. Տորման անգլերէն և Տիար Տ. Խրլորեան հայերէն լեզուներով:

Հալէպի Ալշկահնց Ամերիկեան Հայ Սքոլը այս տարի ունեցաւ 11 ուսումնաւարտուհիներ: Աւարտական հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 24 ին Ազիլիէի Հայ Աւետ. Եկեղեցիի սրահը, ուր խօսեցաւ Վեր. Մ. Կ. Փափաղեան:

Հալէպի Մանչեսթրի Ամերիկեան Բարձրագոյն Վարժարանին Սօֆօմօր կարգէն 8 ուսանողներ վկայական ստացան: Այս տարի հաստատութիւնս բացառիկ հանգիստութիւններ ունեցաւ որոնց մասին յաջորդիւ:

Ըստ սովորութեան Սուրիոյ բոլոր հայ մանկապարտէզները եւ նախակրթարանները իրենց ամառը ընկնող հանդէսները կատարեցին չլացուցիչ եւ զբօսեցուցիչ կերպով՝ ուսումնաւարտներու բանակ մը, մօտ հազար հոգի, (կէսը մանկապարտէզէն) ընծայելով ազգին:

Յունիսի վերջը Վեր. Փափաղեան Տէր-Զօրի շրջանը կատարած պտոյտէն Հալէպ վերադարձած եւ անմիջապէս Անքիոքի հայկական դիւղերը մեկնած է:

Տօքթ. Ա. Ալթունեան եւս ամառնային արձակուրդը անցնելու համար իր տիկնոջ հետ Անգլիա մեկնած է:

Տօքթ. Ճ. Մէրիլ եւ Միս Նօրթըն Պոլիս մեկնած են Մ. Սրբեկէլքի մէջ գործող Ամերիկեան Պորտի տարեկան ժողովին մասնակցելու:

Այնթապէ եկող ճամբորդներու տեղեկագրութեան համեմատ նախկին Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի շէնքը, Գայաճըլ թաղ, որ տարիներէ ի վեր շարժապատկերի ներկայացումներու համար կը գործածուէր, հրդեհի մը հետեւանօք կործանած է: Որչափ որ մեզի ծանօթ է

բոլոր նախկին Թուրք կայսրութեան մէջ աւետարանական առաջին քարաշէն եկեղեցին էր, շինուած 1855 ին:

Հալէպի Մարիսք Յրեհնելու Գոլէճի նոր շէնքին հիմնարկէքի հանդէսը կատարուեցաւ 29 Յունիս, Կիրակի կէսօրէ վերջ, Մաքսատան ճիշդ զիմացը Պաղտատի կայանին մօտ:

USUՅԱՆՔ

ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ԲՍՐՈՉՆԵՐԸ, համադրութեամբ ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵՆԱՆԻ, ընտիր հաւաքածոյ մը Դպրեվանքեան քարոզներու, ի լոյս ընծայուած «Մեծ իմաստասէր Ուսուցչին և մեծահանճար բանաստեղծ Բաբուշայեանին և Պատրիարքին Երուսաղէմի Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Դուրեանի... Յօրհանին առթիւ» Գինն է 4 շիլինգ հասցէն է. —

The Right Rev. Leon Tourian
Armenian Bishop of Manchester
229 Upper Brook St.

MANCHESTER
(ENGLAND)

“ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ”Ի ԳՈՐԾԱԿԱԼԸ

Հարաւային Ամերիկայի մէջ Արխէնթինայի և Ուրուկուէյի Հանրապետութեանց մեր ընդհանուր գործակալն է ՏԻԱՐ ՅՈՎՀ. ՀԱԼԷՊԼԵԱՆ: Կը խնդրուի այդ շրջաններու մեր բաժանորդներէն որ յետապօսու «Նոր Աւետարան»ի հետ իրենց բոլոր հաշիւները կատարեն Տիար Հալէպլեանի միջոցաւ որուն հասցէն է — Calle Zellarrayou 1100, Buenos Aires, Argentina.

صاحب الامتياز و مدير المسؤول
قنيس قره بت هاروتونيان